

ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# Մենինգոկոկային պատվաստանյութեր

## Ինչ պետք է դուք իմանաք

Many Vaccine Information Statements are available in Spanish and other languages. See [www.immunize.org/vis](http://www.immunize.org/vis).  
Պատվաստանյութերին վերաբերող շատ հայտարարություններ հասանելի են իսպաներենով և այլ լեզուներով: Տե՛ս <http://www.immunize.org/vis>

### 1 Ինչ է մենինգոկոկային հիվանդությունը:

Մենինգոկոկային հիվանդությունը լուրջ բակտերային հիվանդություն է: Այն Միացյալ Նահանգներում 2 տարեկան երեխաներից սկսած մինչև 18 տարեկանների մոտ առաջացող բակտերիալ մենինգիտի հիմնական պատճառն է: Մենինգիտը ուղեղաթաղանթի և ողնուղեղի վարակ է:

Մենինգոկոկային հիվանդությունը նաև արյան վարակներ է առաջացնում:

Միացյալ Նահանգներում ամեն տարի 1000-1200 մարդ հիվանդանում է մենինգոկոկային հիվանդությամբ: Նույնիսկ հակաբիոտիկներով բուժման դեպքում, այս մարդկանց 10-15%-ը մահանում է: Ողջ մնացածների 11-19%-ը կորցնում են իրենց ձեռքերը կամ ոտքերը, խնդիրներ են ունենում իրենց նյարդային համակարգի հետ, խլանում կամ մտավոր հետամնաց են դառնում կամ տառապում ցնցումներից կամ կաթվածից:

Ցանկացած մարդ կարող է հիվանդանալ մենինգոկոկային հիվանդությամբ: Բայց այն հիմնականում տարածված է մեկ տարեկանից փոքր մանկիկների և 16-21 տարեկան անձանց մոտ: Որոշակի բժշկական վիճակ ունեցող երեխաները, ինչպիսիք են փայծաղ չունեցողները, մենինգոկոկային հիվանդությունը ձեռք բերելու առավել բարձր վտանգի տակ են: Հևարակացարաններում ապրող թղեջի առաջին կուրսի ուսանողները նա բարձր վտանգի տակ են:

Մենինգոկոկային վարակները կարող են բուժվել դեղերով, ինչպիսին է պենիցիլինը: Բայց և այնպես, շատ մարդիկ, ովքեր ձեռք են բերում հիվանդությունը, մահանում են, իսկ շատ այլ մարդիկ էլ դրա բացասական ազդեցությունը կրում են իրենց ողջ կյանքի ընթացքում: Ահա թե ինչու մենինգոկոկային պատվաստանյութի միջոցով հիվանդությունը կանխարգելելը կարևոր է ամենաբարձր ռիսկային գոտում եղող մարդկանց համար:

### 2 Մենինգոկոկային պատվաստանյութ

ԱՄՆ-ում կա մենինգոկոկային պատվաստանյութի երկու տեսակ.

- Մենինգոկոկային կոնյուգային պատվաստանյութը (MCV4) 55 և ավելի երիտասարդ տարիք ունեցող անձանց համար նախընտրելի պատվաստանյութն է:
- Մենինգոկոկային պոլուսախարի պատվաստանյութը (MPSV4) մատչելի է եղել 1970-ականներից սկսած: Այն միակ արտոնված մենինգոկոկային պատվաստանյութն է 55-ից բարձր տարիք ունեցող անձանց համար:

Երկու պատվաստանյութերն էլ կարող են կանխարգելել մենինգոկոկային հիվանդության 4 տեսակները, ներառյալ Միացյալ Նահանգներում ամենաշատ տարածված 3 տեսակներից 2-ը և այն տեսակը, որը համաճարակ է առաջացնում Աֆրիկայում: Գոյություն ունեւն մենինգոկոկային հիվանդության այլ տեսակներ. պատվաստանյութերը դրանցից չեն պաշտպանում:

Meningococcal VIS (10/14/11) - Armenian

### 3 Ո՞վ և ե՞րբ պետք է մենինգոկոկային պատվաստանյութ ստանա:

Ընթացիկ փոխպատվաստում

MCV4-ի երկու դեղաչափ խորհուրդ է տրվում 11-ից 18 տարեկան դեռահասների համար. առաջին չափաբաժինը 11 կամ 12 տարեկանում՝ 16 տարեկանում արվող լրացուցիչ դեղաչափով:

Այս խմբում եղող ՄԻԱՎ վարակակիր դեռահասները պետք է ստանան երեք դեղաչափ. 2 դեղաչափ՝ 2 ամսի ընդմիջմամբ 11 կամ 12 տարեկանում, գումարած մեկ լրացուցիչ դեղաչափ 16 տարեկանում:

Եթե առաջին դեղաչափը (կամ դեղաչափերի շարքը) տրվում է 13 կամ 15 տարեկան հասակում, ապա լրացուցիչ դեղաչափը պետք է տրվի 16 և 18 տարեկանում: Եթե առաջին դեղաչափը (կամ դեղաչափերի շարքը) տրվում է 16 տարեկանից հետո, ապա լրացուցիչ դեղաչափի կարիք չկա:

### Բարձր ռիսկային գոտում եղող այլ մարդիկ

- Քոլեջի առաջին կուրսում սովորողներ, ովքեր ապրում են հանրակացարաններում:
- Լաբորատորիայի աշխատակիցներ, ովքեր մշտապես ենթարկվում են մենինգոկոկային բակտերիայի վտանգին:
- ԱՄՆ ռազմական նորակոչիկները:
- Ցանկացած ոք, ով ճամփորդում, ապրում է աշխարհի այնպիսի մի մասում, որտեղ տարածված է մենինգոկոկային հիվանդությունը, ինչպիսին է Աֆրիկան:
- Ցանկացած ոք, ում փայծաղը զսասված կամ հեռացված է:
- Ցանկացած ոք, ով անփոփոխ գուգակցվող բաղադրիչի անբավարարություն (իմունային համակարգի խանգարում) ունի:
- Մարդիկ, ովքեր հնարավոր է, որ մենինգիտով վարակված լինեն բռնկման ժամանակ:

9-ից 23 ամսական երեխաները և որոշակի բժշկական վիճակում եղող ցանկացած ոք կարիք ունի 2 դեղաչափի համապատասխան պաշտպանության համար: Հարցրե՛ք ձեր բժշկին դեղաչափերի ժամերի և լրացուցիչ դեղաչափերի անհրաժեշտության մասին:

MCV4-ը նախընտրելի պատվաստանյութն է այս խմբերի մարդկանց համար, ովքեր 9 ամսականից 55 տարեկան են: MPSV4-ը կարող է օգտագործվել 55 տարեկանից բարձր չափահաս անձանց համար:



**4** Որոշ մարդիկ չպետք է մենինգոկոկինային պատվաստանյութ ստանան կամ պետք է սպասեն:

- Ցանկացած ոք, ով երբևէ ունեցել է (կյանքին վտանգ սպառնացող) ալերգիկ հակազդեցություն MCV4-ի կամ MPSV4-ի պատվաստանյութի նախորդ չափաբաժնից, երկու պատվաստանյութերի մեկ այլ դեղաչափ չպետք է ստանա:
- Ցանկացած ոք, ով ծանր (կյանքին վտանգ սպառնացող) ալերգիկ ունի որևէ պատվաստանյութի բաղադրիչի հանդեպ, չպետք է պատվաստանյութն ստանա: *Ձեր բժշկին տեղյակ պահեք, եթե դուք որևէ տեսակի ծանր ալերգիա ունեք:*
- Ցանկացած ոք, ով միջին կամ ծանր աստիճանի հիվանդ է ներարկման պլանավորված օրը, հավանաբար պետք է սպասի, մինչև որ առողջանա: Հարցրեք ձեր բժշկին: Մեղմ հիվանդություն ունեցող մարդիկ սովորաբար կարող են ստանալ պատվաստանյութը:
- Մենինգոկոկինային պատվաստանյութը կարող է տրվել հոդի կանանց: MCV4-ը բավական նոր պատվաստանյութ է և չի ուսումնասիրվել հոդի կանանց մոտ այնքան շատ, որքան որ MPSV4-ը: Այն պետք է օգտագործվի, երբ հստակ կերպով կա դրա անհրաժեշտությունը: MCV4 արտադրողները հոդի ժամանակ գրանցամատյաններ են պահում այն կանանց համար, ովքեր հոդի ժամանակ պատվաստանյութ են ստանում:

Բացի այն երեխաներից, ովքեր մանկադպրոց բջջային սակավարյունություն ունեն կամ գործող փայծաղ չունեն, մենինգոկոկինային պատվաստանյութերը կարող են տրվել այլ պատվաստանյութերի հետ միասին:

**5** Որո՞նք են մենինգոկոկային պատվաստանյութի վտանգները:

Պատվաստանյութը, ցանկացած այլ դեղորայքի պես, հնարավոր է, որ լուրջ խնդիրներ առաջացնի, ինչպիսիք են լուրջ ալերգիկ հակազդեցությունները: Մենինգոկոկային պատվաստանյութի լուրջ զննարկ կամ մահվան պատճառ դառնալու վտանգը շատ փոքր է:

Ուշաթափության կարճատև նոպաները և դրա հետ կապված այտուցները (ինչպիսիք են ջրածուխները) կարող են պատահել ցանկացած պատվաստումից հետո: Դրանք ավելի հաճախ հանդիպում են դեռահասների մոտ և կարող են հանգեցնել անկուսների կամ զննարկների:

Մրսկումից հետո 15 րոպե նստելը կամ պտկելը, հատկապես եթե դուք ուշաթափության զգացողություն ունեք, կարող է օգնել կանխարգելելու այս զննարկները:

**Թեթև խնդիրներ**

Մենինգոկոկային պատվաստանյութ ստացող մարդկանց կենսից ավելին ունենում են թեթև կողմնակի ազդեցություններ, ինչպիսիք են կարմրությունը կամ ցավը սրսկման տեղում:

Եթե այս խնդիրներն առաջանում են, ապա դրանք սովորաբար տևում են 1 կամ 2 օր: Դրանք ավելի հաճախ են հանդիպում MCV4-ից, քան MPSV4-ից հետո:

Պատվաստանյութն ստացող մարդկանց փոքր տոկոս թույլ ջերմություն է ունենում:

**Ծանր խնդիրներ**

Լուրջ ալերգիկ հակազդեցությունները՝ սրսկումից մի քանի րոպեից մինչև մի քան ժամ անց շատ հազվադեպ են:

DCH-0930A

Բժշկական խնամք ապահովող(ներ)ին թույլատրելու համար պատվաստումների իրավիճակի վերաբերող ճշգրիտ տեղեկություն, պատվաստումների գնահատականներ եւ հետագա պատվաստումների առաջարկված գրաֆիկը, տեղեկությունները կուղարկվեն Michigan Care Improvement Registry (Միչիգանի խնամքի բարելավման գրանցման կենտրոն): Անհատներն իրավունք ունեն պահանջելու իրենց բժշկական խնամք ապահովողից, որպեսզի պատվաստումների տեղեկությունները գրանցման կենտրոն չուղարկվեն:

**6** Ի՞նչ անել, եթե կա միջին կամ ծանր հակազդեցություն:

**Ի՞նչ պետք է ես փնտրեմ:**

Ցանկացած ոչ սովորական միճակ, ինչպիսիք են ծանր ալերգիկ հակազդեցությունը կամ բարձր ջերմությունը: Եթե ծանր ալերգիկ հակազդեցություն առաջանա, այն կլինի սրսկելուց հետո մի քանի րոպեից մինչև մեկ ժամվա ընթացքում: Ծանր ալերգիկ հակազդեցության նշանները կարող են ներառել շնչելու դժվարություն, թուլություն և խոպոտություն կամ խզխզոցով ծանր շնչառություն, սրտի արագ զարկեր, եղնջատենդ, գլխապտույտ, գունատություն կամ կոկորդի այտուցվածություն:

- Ի՞նչ պետք է ես անեմ:**
- Բժիշկ կանչեք կամ հիվանդին անմիջապես բժշկի տարեք:
  - Պատուեք ձեր բժշկին, թե ինչ է պատահել, եջեք ամսաթիվը, ժամը և այն, թե երբ է տրվել պատվաստանյութը:
  - Խնդրեք ձեր առողջապահության մատակակարողին զեկուցել հակազդեցության մասին՝ լրացնելով պատվաստանյութի բացասական դեպքերի զեկուցման համակարգի (VAERS) ձևաթուղթը: Կամ դուք կարող եք այս զեկույցը ներկայացնել VAERS-ի կայքէջի միջոցով [www.vaers.hhs.gov](http://www.vaers.hhs.gov) հասցեով կամ զանգահարելով 1-800-822-7967 հեռախոսահամարով:

VAERS-ը բժշկական խորհրդատվություն չի տրամադրում:

**7** Պատվաստանյութից ստացած զննարկների փոխհատուցման ազգային ծրագիր

Պատվաստանյութից ստացած զննարկների փոխհատուցման ազգային ծրագիրն (VICP) ստեղծվեց 1986թ.-ին:

Մարդիկ, ովքեր վստահ են, որ իրենք զննարկ են պատվաստանյութի պատճառով, կարող են տեղեկանալ ծրագրի մասին և հայց ներկայացնել զանգահարելով 1-800-338-2382 հեռախոսահամարով կամ այցելելով VICP-ի կայքէջը՝ [www.hrsa.gov/vaccinecompensation](http://www.hrsa.gov/vaccinecompensation) հասցեով:


**8** Ի՞նչպե՞ս կարող եմ ավելին իմանալ:

- Ձեր բժիշկը կարող է ձեզ տալ պատվաստանյութերի փաթեթի ներդիրը կամ առաջարկել տեղեկատվության այլ աղբյուրներ:
- Չանգահարեք ձեր տեղական կամ նահանգային առողջապահության վարչություն: 1-888-767-4687
- Կապվեք հիվանդության վերահսկման և կանխարգելման կենտրոնի (CDC) հետ.
  - Չանգահարեք՝ 1-800-232-4636 (1-800-CDC-INFO) կամ
  - Այցելեք CDC-ի կայքէջը՝ [www.cdc.gov/vaccines](http://www.cdc.gov/vaccines) հասցեով

Vaccine Information Statement (Interim)  
**Meningococcal Vaccines**

10/14/2011 Armenian

42 U.S.C. § 300aa-26



Translation provided by the California Department of Public Health  
 AUTH: P.H.S., Act 42, Sect. 2126.